«ՀԱՅԵՐԸ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՇՔՆԵՐ ԵՆ ԳՈՐԾԵԼ»

Posted on November 24, 2020 by Keghart



Category: Opinions

Ռուսաստանի Հրթիռային և հրետանային գիտությունների ակադեմիայի (ՌՀՀԳԱ) նախագահի տեղեկատվական քաղաքականության գծով տեղակալ, ռազմական գիտությունների դոկտոր Կոնստանտին Սիվկովը մեկնաբանել է Արցախի պատերազմի արդյունքները:

Sputnik, ԵՐԵՎԱՆ, 19 նոյեմբեր 2020 Ռուսաստանի Հրթիռային և հրետանային գիտությունների ակադեմիայի(ՌՀՀԳԱ) տեղեկատվական քաղաքականության գծով փոխնախագահ, ռազմական գիտությունների դոկտոր Կոնստանտին Սիվկովը Dialogorg.ru-ին տրված հարցազրույցում հայտարարել է, որ Արցախում ընթացող պատերազմն ավարտվել է մարտական ոչոքիով:

Սիվկովի կարծիքով՝ հակամարտության ընթացքում Բաքվին միայն մասնակի է հաջողվել հասնել իր նպատակին. Ադրբեջանի ԶՈւ-ն կարողացել է իր վերահսկողության տակ վերցնել միայն 5 շրջան (որոնք այսպես թե այնպես նախատեսվում էր նրան փոխանցել ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում կայացած բանակցությունների արդյունքում) և գրավել նախկին ԼՂԻՄ-ի մի չնչին մասը:

«Հայաստանը և ԼՂՀ-ն կարողացել են պահպանել ինքնիշխանությունը և տարածքի հիմնական մասը: Այսինքն՝ նպատակը մասամբ է իրականացել: Սա մարտական ոչ-ոքի է: Այդ պատճառով խոսակցություններն այն մասին, որ հաղթել է Ադրբեջանը, չի կարելի կոռեկտ համարել»,-ընդգծել է Սիվկովը:

Ինչպես նշել է փորձագետը՝ հաշվի առնելով ադրբեջանական բանակի գերազանցությունը ինչպես ուժի, այնպես էլ միջոցների առումով, ինչպես նաև Թուրքիայի ակնհայտ աջակցությունը, չի կարելի չհիանալ հայկական զորքերի արիությամբ և դիմացկունությամբ:

Ինչ վերաբերում է բուն Հայաստանում պատերազմի արդյունքի բացասական ընկալմանը, ապա ռազմական փորձագետի կարծիքով ՝ «նրանք, ովքեր վազվզում են հրապարակներում(Երևանում, – խմբ.) կա՛մ հիմարներ են, կա՛մ քաղաքական խարդախներ»:

Նրա կարծիքով՝ նրանց պետք էր ռազմաճակատ ուղարկել, և այդ ժամանակ նրանք կհասկանային, թե ինչ է դա:

Դրա հետ մեկտեղ, Սիվկովի տեսանկյունից, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ինչ-որ չափով պատասխանատու է լարվածության աճի համար, քանի որ «ձախողել է Լեռնային Ղարաբաղի կազմի մեջ երբեք չմտած և Ադրբեջանին պատկանող տարածքների հանձնման բանակցությունները»:

Նա նշել է, որ այս զինված հակամարտության ընթացքում երկու կողմերն էլ ինչպես կենդանի ուժի, այնպես էլ տեխնիկայի հսկայական կորուստներ են կրել: Փորձագետի խոսքով՝ ադրբեջանական հասարակությունն ավելի զգայուն է վերաբերվում

կորուստներին, քան հայկականը, և այս պայմաններում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը չի կարող խոստովանել, որ չի հասել լիակատար հաղթանակի՝ Արցախի ամբողջ տարածքը գրավելու տեսքով:

Նա չի կարողանա անել դա, հատկապես այն ժամանակ, երբ հայտնի դառնա ադրբեջանական կողմի զոհվածների իրական թիվը, կարծում է Սիվկովը:

«Մի ելք է մնում՝ որքան հնարավոր է՝ բարձր գոռալ մեծ հաղթանակի մասին: Ընդ որում՝ ամենակոշտ արտահայտություններով: Ինչն էլ հենց անում է Ալիևը: Ընդ որում, ուշադրություն դարձրեք. Ալիևը շատ լավ գիտակցում է, որ սա կիսահաղթանակ և կիսապարտություն է: Նա սարսափելի չարացած է տեղի ունեցածի պատճառով: Այս ամենի հետևանքը լինելու է այն, որ Ալիևը կսկսի հստակ թուրքամետ քաղաքականություն վարել, և Ադբեջանը կդառնա Ռուսաստանին թշնամի պետություն»,-հավատացած է փորձագետը:

Սիվկովը ուշադրության է հրավիրել այն փաստին, որ Ալիևն արդեն սկսել է բացահայտ խաբել: Մասնավորապես, Ադրբեջանի նախագահը հայտնում է, որ թուրք զինծառայողները, իբրև թե, կանգնած են լինելու Լեռնային Ղարաբաղի շփման գծում, չնայած այնտեղ գտնվելու են միայն ռուս խաղապահները:

Բացի այդ, ՌՀՀԳԱ-ի փոխնախագահի կարծիքով՝ այն, որ Ալիևը համաձայնություն է տվել միայն ռուս խաղաղապահների առկայությանը, նշանակում է, որ ադրբեջանական բանակը չէր կարող շարունակել պատերազմը:

«Ռուսաստանում Ալիևի «դեղահաբը քաղցրացնելու համար» խոսում են այն մասին, որ այո՛, Հայաստանը պարտություն է կրել, իսկ Ադրբեջանը հաղթել է: Իսկ հայ հասարակության մի մասը, այսպես ասենք, այնքան էլ լավ չհասկանալով, թե ինչ է կատարվում ԼՂՀ-ում, չգիտակցելով իր հաղթանակի վեհությունը, ելույթ է ունենում ցույցերի ժամանակ»,-կարծում է Սիլկովը:



Փորձագետն ընդգծել է, որ ՀՀ և ԱՀ Զինված ուժերի ընդհանուր պոտենցիալը մոտ 5 անգամ զիջում է Ադրբեջանի ընդհանուր ռազմական պոտենցիալին: Ադրբեջանի Զինված ուժերը Արցախում ռազմական գործողություններ են սկսել երկու ուղղություններով՝ հյուսիսարևմտյան և հարավարևելյան: Բայց, ունենալով նման գերազանցություն, նրանք հսկայական կորուստներով կարողացել են մեկ շաբաթվա ընթացքում ընդամենը մի քանի կիլոմետր անցնել:

«Լեռնազանգվածի վրա Ղարաբաղի պաշտպանության երկրորդ գծին բախվելով, նրանք հասկացան, որ չեն կարող շարունակել գրոհը: Ուստի մեկ շաբաթ անց նրանք վերախմբավորեցին ուժերը, կենտրոնանալով միայն հարավարևելյան ուղղության վրա: Այդ ուղղությամբ նրանք 10-12 անգամ գերազանցող ուժ ստեղծեցին: Լավ նայեք այս թվերին. այդպիսի գերազանցության պայմաններում նրանք 30-40 կմ ճանապարհը անցան մեկ ամսվա ընթացքում»,-ընդգծել է Սիվկովը:

Անգամ ճեղքելով պաշտպանության բոլոր գծերը և դուրս գալով օպերատիվ հարթավայր, ադրբեջանական ստորաբաժանումները, փորձագետի խոսքով, շարունակում էին կատաղի դիմադրության հանդիպել հայերի կողմից:

Խոսելով պատերազմական և ռազմավարական նրբությունների մասին, փորձագետը հայտնել է, որ Ադրբեջանի սպառազինության մեջ համազարկային կրակի և հրետանու մեծ քանակությամբ ռեակտիվ համակարգեր կային՝ 50-90 կմ հեռահարությամբ: Հայկական կողմի մոտ դաշտային հրետանին ուներ 15-20 կմ առավելագույն հեռահարություն:

«Ադրբեջանցիները արտասահմանում գնված մոտ 50-70 ԱԹՍ ունեին: Այդ ԱԹՍ—ները հրետանուն մատնանշում էին թիրախը՝ նպատակային կրակի համար: Հայերը ԱԹՍ-ներ չունեին: Նրանք օգտագործում էին համակարգեր, որոնք թույլ են տալիս ցածր ճշգրտությամբ որոշել մարտկոցի տեղը արդեն դրա կրակելուց հետո: Այսպես կոչված հրետանային հետախուզության համակարգեր: Ադրբեջանցիները կարող էին խորը կրակային հարվածներ հասցնել, իսկ հայերը չէին կարող պատասխանել:

Նրանք կարող էին խոցել միայն իրենց հրետանու հեռահարության սահմաններում, այդ դեպքում ստիպված էին հետախույզների արվեստից օգտվել՝ զենքերին կրակի թիրախը

մատնանշելու համար»,-պարզաբանում է ռազմական գիտությունների դոկտորը:

Բացի այդ, ադրբեջանցիներն ԱԹՍ-ների դեմ պայքարի համար ունեցել են հակաօդային պաշտպանության բավարար միջոցներ, իսկ Ղարաբաղն այդ ամբողջ պաշտպանական գծի համար ունեցել է ընդամենը 6 «Շիլկա» տիպի ինքնագնաց հրանոթ:

«Գումարած, իմ պատկերացմամբ, հայերը ուղարկել են ևս մի տասնյակ հրանոթ: Եվ ահա այդ սարքերը, 2-2,5 կմ հեռահարությամբ ոչնչացրել են Ադրբեջանի ԱԹՍ-ների երեք քառորդը: Դրանից հետո անօդաչուների կիրառումը դադարեց»,-նկատել է Սիլկովը:

Ռազմական փորձագետը ևս մի փաստ է նշում. Ադրբեջանի ՋՈւ-ն ուներ 100 ժամանակակից T-90 տանկ, մինչդեռ հայկական կողմը՝ 1: Հայերի մյուս տանկերը առաջին մոդիֆիկացիաների T-72-ներ են, որոնք T-90-ի դեմ կարող են կռվել միայն խիստ բարենպաստ պայմաններում: Ընդհանուր առմամբ, հայկական կողմն ուներ 200 տանկ, իսկ ադրբեջանական կողմը՝ 444:

«Միայն մի բան կարող եմ ասել. Ղարաբաղի զորքերի հրամանատարական կազմի թե՛ օպերատիվ արվեստը, թե՛ մարտավարական կրթությունը բարձրագույն մակարդակի է: Արիությունը բարձրագույն մակարդակի է: Այն պայմաններում, որում նրանք կռվում էին, ուժի և միջոցների այն հրեշավոր առավելության պայմաններում, որ ունեին ադրբեջանցիները, հայերը զանգվածային հերոսության հրաշքներ են գործել: Այլ կերպ ասել չեմ կարող»,-ասում է Սիվկովը:

Նա հիշեցրել է, որ պատերազմի ամենասկզբում Թուրքիան Սիրիայի Իդլիբ գավառից 300-400 գրոհային էր ուղարկել Արցախ: Եվ չնայած այդ վարձկանները լուրջ մարտական փորձառություն ունեին, նրանցից 50-ը սպանվել են պատերազմի առաջին իսկ օրը:

Բացի այդ, հայտնի է, որ թուրք զինվորականները մասնակցել են թե՛ անօդաչու սարքերի, թե՛ ադրբեջանական զորքերի կառավարմանը: Սակայն Ադրբեջանը, միևնույն է, լուրջ դիմադրության է բախվել:

«Շուշիում քաղաքի արվարձաններում ադրբեջանցիների հայտնվելուց մինչև այն գրավելու պահը երեք օր անցավ: Իրենց ունեցած ուժերով հայերն արել են անհնարինը: Հայերը Ադրբեջանի գրոհը հետ են մղել նվազագույն տարածքային և մարդկային կորուստներով: Ֆենոմենալ իրավիճակ է, որը, կարծում եմ, դեռ հիմնավորապես ուսումնասիրվելու է ռազմագիտության մեջ»,-համոզված է Սիվկովը:

There are no comments yet.